

ՖԻԶԿՈՒԼՏ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԵՌՆԱՐԿ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՀԱՄԱՐ



371-7  
\\$-52

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵՐԵՎԱՆ

1940

6 DEC 2010

371.7  
8 - 59 մի

ՖԻԶԿՈՒԼՏ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԶԵՐՆԱՐԿ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀ ԼՈՒԳՈՒՂԿՈՄԱՆԻ ԿՈՂՄԻՑ

5 SEP 2013

830<sup>u</sup>




1750

40

## ФИЗКУЛЬТУПРАЖНЕНИЯ ДЛЯ ДОШКОЛЬНИКА

Арменгиз 1940  
Ереван



2002

ՀԻԳԻԵՆԻԿ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՄԱՍԸ

Հիգիենիկ վարժությունը միջոց և յերեխաների որդանիքնն  
ամբացնելու, առողջացնելու, մանկական կոլեկտիվը կազմակեր-  
պելու և որվա աշխատանքը սկսելու համար:

Վարժությունը կատարվում է բացովյա, կամ շենքում,  
արթնանալուց անմիջապես հետո, կամ հավաքից կես ժամ  
հետո:

Ցեթե յերեխաները վարժությունը կատարում են արթնա-  
նալուց անմիջապես հետո, դա լիցք և և գրա համար պետք և  
առաջ կիսավորապես այնպիսի վարժություններ, վոր որդանիքնն  
արքնանա, նյութերի փոխանակման պրոցեսը ուժեղանա:

Այս ռեժիմը կարելի յե կիրառել այն դեպքում, յեթե յե-  
րեխաները գիշերում են մանկական հիմնարկում, կամ ապրում  
են լագեր-սանատորիական պայմաններում:

Ցեթե վարժությունը կատարում են հավաքից կես ժամ  
հետո, դա առավոտվա վարժությունն ե, դա մանկական կոլեկ-  
տիվի կազմակերպման և առողջացման միջոց ե:

Վարժությունը բացովյա կարելի յե կատարել այն դեպ-  
քում, յերբ յեղանակը նպաստավոր ե, չկա վոչ անձրե, վոչ ձյուն,  
վոչ ռառ քամի, վոչ ել փոշի:

Չի կարելի վարժությունը կատարել շատ ցուրտ յեղանա-  
կին (առնամանիքին):

Վարժությունը բացովյա կարելի յե կատարել բաց սպառը-  
գումքում և բակում:

Բակը պետք է լինի ընդարձակ, հարթ, մաքուր, իսկ տաք  
յեղանակին՝ ջրած: Ցանկալի յե ասֆալտով ծածկել մարզանքին,  
Փիզկուլտ վարժություններին և խաղերին հատկացրած հողա-  
մասը և հաճախ լվանալ այն:

Յեթե վարժությունը կատարում են շինքում (սենյակում, փակ պատշաճամբում), տեղը պետք է լինի նոռնպիս ընդարձակ, ողը մաքուը (անհրաժեշտ ե, վոր ողանցքը լինի բայց), հատակը խոնալ շորով սրբած, ջերմաստիճանը՝ 6°—10°:

Հագուստը և կոշիկներն առասարակ պետք է լինեն թեթև, Ամառվա պայմաններում յերեխաները պետք է լինեն տրուսիկով և չստեռով բարձր և ցուրպ վայրերում նաև մայիսյով:

Վարժությունը պետք է տալ ամեն որ 5—7 րոպե տեղությամբ (5 տարեկանից սկսած):

## Գ Լ Ո Ւ Խ Ա

### ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԱՍ

1. Առավոտվա վարժությունը (և լիցքը) բաժանվում է յերեք մասի՝

ա) ներածական մաս, վորտեղ տրվում և կարճատե քայլք և շրջան կամ շարասյուներ կազմելը.

բ) հիմնական մաս, վորտեղ տրվում են մարմամարզական վարժություններ.

գ) յեղբափակման մաս, վորտեղ շրջանը կամ շարասյունները վերակառուցվում են շարքի և յելք:

2. Առավոտվա վարժությունների համար պետք է տալ ծանոթ շարժություններ:

3. Նոր վարժությունը սովորեցնել ֆիղկուլտ պարապմունքների ժամանակ:

4. Վարժությունները տալ սխեմայով, հնդորյակում մեկ տեսակ:

5. Սխեմաները տարվա ընթացքում պետք է կրկնել վարժությունները խորացնելու և լավ յուրացնելու համար:

6. Վարժությունների քանակը սխեմաներում՝

ա) միջակ խմբի յերեխաների համար 3—4 տեսակ,

բ) մեծ խմբի յերեխաների համար 3—5 տեսակ,

շ) 7 տարեկանների համար 4—7 տեսակ:

7. Բոլոր վարժությունները կարելի յերդացնել բար-

ժացնել՝

ա) միացնելով յերկու-յերեք վարժություն, որինակ՝ ձեռ-

քերի վարժություն (պարզել առաջ, հետո վեր բարձրացնել առածել կողմերը և ընդունել յելման դրությունը).

բ) փոխելով յելման դրությունը, որինակ՝ օծափ առաջ արմունկները չծալած թերով վարժությունը կարելի յե կատարել կանգնած, ծալապատիկ նստած, կամ նստած՝ վոաքերն առաջ պարզած, մեջքի վրա պառկած. «կոանալ առաջ» վարժությունը կարելի յե կատարել ձեռքերի զանազան յելման դրություններից՝ ձեռքերը գոտկատեղին, ձեռքերը մեջքին՝ հակասակ արմունկները բռնած, ձեռքերը ծոծրակին (6—7 տարեկանների համար), ձեռքերը զելի կողմերը տարածած և այլն:

8. Յեթե վարժությունն ունի ձեռքերի մի քանի յելման դրություն, այդ գեպը պետք մի հնգորյակում պետք է տալ մի յելման դրությամբ վարժություն, իսկ մյուս հնգորյակում՝ մի այլ, որինակ «կոանալ առաջ և խփել ծնկներին» վարժությունը՝ մի յելման դրություն՝ ձեռքերը գոտկատեղին, յերկրորդ յելման դրություն՝ ձեռքերը կողմերը տարածած և այլն: Հետագայում, յերբ վարժությունը կրկնում են, յելման դրությունը կարելի յե վոխել ամեն որ, նույնիսկ մի որվա մարզանքի ընթացքում վարժությունը կարելի յե տալ մի քանի յելման դրությամբ:

9. Յելման դրությունն այն գրությունն ե, վորից պետք է կատարել վարժությունը: Յելման դրությունը նշանակում ենք «յել դր.», իսկ վարժությունը՝ «վ.» տառով:

10. Վարժությունների տեսակն աստիճանաբար դժվարացնել. որինակ՝ յեթե տարվա սկզբում տրվում է «կոսնալ առաջ ձեռքերը ցած իջեցնելով» վարժություն, ապա հետագյում պետք է աշխատել, վոր տրվի «ձեռքերը ցած իջեցնել և դիպչել հասակին, ծնկները չծալելով» վարժություն:

11. Յելման դրությունն աստիճանաբար դժվարացնել. որինակ՝ «ծափ առաջ արմունկը չծալած թերով» վարժությունը, սկզբից կարելի յե տալ ձեռքերի առաջին յելման դրությունից, հետո 2, 3, 6, 11 և այլ դրությունից:

12. Եներգիայի մեծ սպառում պահանջող վարժությունը կարելի յե կրկնել 3—4 անգամ, որինակ՝ «ձեռքերը թափով տարածել կողմերը—յետ և հանգիստ մոտեցնել կրծքին» վարժությունը:

Յեթե հեշտ ե վարժությունը, որինակ՝ «ժամացույց», կարելի յե այն կատարել 5—7 անգամ:

13. Յեթե մի վարժության մեջ շարժումների թիվը շատ է,

«բինակ՝ «Շոգեշարժի անիվներ», վորտեղ կա 8—12 շարժում, այդ դեպքում միջակ խմբի յերեխաները վարժությունը կատարում են 2 անգամ, իսկ մեծերի և 7 տարեկանների խումբը 2—3 անգամ:

14. Վորոշ շարժումներ կարելի յե կատարել և հանգիստ, թափով, որինակ՝ «Ճեռքերը տարածել կողմ—յետ» (յելման զրություն՝ ձեռքերն արմնիկից ծալած, արմունկները կողմերը տարածած, իսկ դաստակները կրծքի մոտ ափերը դեպի ցած, մատները իրար մոտեցրած) վարժությունը կարելի յե կատարել.

ա) ձեռքերը հանգիստ տարածելով կողմերը—յետ և թափով մոտեցնելով կրծքին.

բ) նույնը՝ թափով տարածելով կողմերը—յետ և հանգիստ մոտեցնելով կրծքին:

15. Բոլոր վարժությունները կարելի յե տալ դանդաղ և արագ, որինակ՝ «Ճեռքերով պատույտներ կատարել».

ա) ձեռքերը պարզել առաջ, վեր բարձրացնել, տանել կողմերը—յետ և իջեցնել.

բ) նույնը կատարել արագ:

Եյս վարժությունը հետազայում կարելի յե տալ այսպես մեկ անգամ կատարել դանդաղ և 2—3 անգամ արագ (6—7 տարեկանների համար):

16. Վորոշ վարժություններ կարելի յե աստիճանաբար արագացնել և դանդաղեցնել, որինակ՝ «Շոգեշարժի անիվներ» վարժությունը ոկզրից պետք ե տալ դանդաղ, կատարելով մեծ պատույտներ, հետո աստիճանաբար արագացնել, պառ տները փաքրացնելով, ապա նորից դանդաղեցնել, պառույտները մեծացնելով, և վերջում հանգիստ ցած իջեցնել ձեռները:

17. Նախադպրոցական տարիքի յերեխաների համար վարժությունների մեծ մասը պետք ե լինի պատկերավոր, մանավանդ միջին խմբի յերեխաների համար:

Պատկերը պետք ե լինի հասկանալի և մատչելի (կենդանիների, եռչունների, աշխատանքի, մեքենաների, բնության և այլ շարժումներ): Պատկերը հեշտացնում է վարժությունների կատարումը, և գլխավորապես, ապահովում է հետաքրքրություն և լավ արամագրություն, վարժությունները կարելի յե տալ պատմության ձևով:

18. Զպետք ե տալ հատուկ վարժություն շնչառության համար, այլ վարժությունների շարժումներն այնպիս զասավորեք

վոր յերեխան շնչառությունն ոգտագործի բնական ձևով: Նախադպրոցական հասակի յերեխայի շնչառությունը մակերեսային ե, արգանքի միջոցով յերեխան շնչառությունը խորացնում ե, տալով նրան համապատասխան շարժումներ, իրեն հատուկ տեմպով: Ուշագրություն դարձնել վոր յերեխան շնչառությունը շպահի: Մեծ չափով ոգտագործել այն վարժությունները, զորտեղ հնարավոր ե խոր արտաշնչում կատարել: Ներս շնչելը պետք ե լինի բնական ձևով, այնքան, վորքան պետք ե յերեխայի համար: Արտաշնչման համար տրվում է բացականչություն կամ հաշիվ «ուխ», «ոխ», «չու», «ֆու-ս», «ֆշ-շ», «ս-ս», «շ-շ», և այլ տեսակի բացականչություններ և «1, 2, 3, 4», կամ «1, 2, 3, ծափ»:

Արտաշնչումը վարժության մեջ պետք ե գուգադիպիկի կրծքի վանդակի նեղացմանը, որինակ՝ դանդաղ կունակ առաջ—ցած, ձեռքերը ցած իջեցնելով և բացականչել «ու-ս», կամ «տաքանալը վարժությունը և այլն»:

19. Բոլոր վարժություններն ըստ հնարավորին տալ և աջ, և ձախ կողմի համար, վորպիսզի մարմնի կողմերը հավառար չափով զարգանան, և յուրաքանչյուր կողմի համար տրվող վարժությունը կատարել 2—4 անգամ:

Աջ և ձախ կողմի համար տրվող վարժությունների մեծ ժամը, վորոնց կատարումն անմիջապես չի հաջորդում իրար, ոկզրսական շրջանում տալ մի քանի անգամ մեկ կողմի համար, հետո նույնը մյուս կողմի համար: Հետազայում, յերբ վարժությունը խորացի ե, այն տալ հերթով՝ մեկ աջ կողմի համար, մեկ ձախ կողմի համար, մեկ աջ, մեկ ձախ և այլն:

20. Վարժությունների մեջ շարժումները և բացականչությունն աստիճանաբար ուժեղանել, որինակ, «ծափ առաջ արմառները չծափած թերերով», «Ճեռքերը մեջքին» յելման դրությունից՝ առաջին անգամ ծափ տալ առանց ազմուկի, բացականչել անձայն («ծափ», կամ «մեկ») և ընդունել յելման դրություն, յերկրորդ անգամ քիչ ուժեղ ծափ տալ, բացականչել լոելի ձայնով և ընդունել յելման զրությունը և վերջապես չորրորդ անգամ ուժեղ ծափ տալ մեկ կամ մի քանի անգամ, ուժեղ բացականչել, ձայնը յերկարացնելով «ծափ-ա-սափ», կամ «չու-ու-որ»:

21. Վարժությունը խիստ ոիթմի չենթարկել, մանավանդ

միջակ խմբում, բայց կատարել միաժամանակ, վորպեսդի յերեխաները ճիշտ կատարեն վարժությունը, որինակ՝ օխոր պղղել» վարժությունը, յերեխաները միաժամանակ և արագ պղղում են՝ մի քիչ խում այդ դրության մեջ, հետո արագ և միաժամանակ կանգնում:

(Զպետք ե վարժությունը դանդաղ կատարել, դա դժվար է այդ հասակի յերեխաների համար),

22. Պարանոցի վարժությունը կապել մյուս վարժությունների հետ, որինակ՝ «Ճեռքերը տարածել աջ կողմ և նայել մատների ծայրերին» վարժությունը:

23. Չտալ հատուկ վարժություն մատների համար, այլ կապել վորոնեց վարժության հետ, որինակ՝ ձեռքերը նետել առաջ բռունցքը բաց անելով:

Մատների հատուկ վարժությունը կարող ե առաջ բերել լարվածություն, յերեխաները մատների հետ միասին անդիտակացարար լարում են ամբողջ ձեռքը:

24. Վազքի, ցատկումների և վոստյունների ժամանակ աղատ շնչելու համար յերեխաները վոչ բացականչում են և վոչ ել հաշվում:

25. Վազքի, ցատկումների և վոստյուններից հետո տալ արագ քայլք յերեխաներին հանդատացնելու համար և այն առաջանաբար փոխել սովորական քայլքի:

26. Վազքի ժամանակ ձեռները չպետք ելինեն լարված, այլ պետք և զինեն արմնկից ծալած, մատները թեթև բռնցքած, արմունկները պետք և աղատ շարժվեն վազքի համեմատ:

27. Ցատկումները և վոստյունները կատարելիս ուշադրություն դարձնել ծնկներին, վոստնել թաթերի վրա, ծունկը քիչ ծալելով զապանակի պիս:

28. Ուշադրություն դարձնել վարժության ճիշտ կատարման վրա, միևնույն ժամանակ լինել խոտապահանջ և մի յերեխայի պատճառով չստիպել, վորամբողջ խումբը վարժությունը կատարի նորմայից ավելի:

29. Յեթե վարժությունն եներգիայի մեծ սպառում և պահանջում (որ)նակ՝ «Շոգեշարժի անխներ», նման վարժությունից հետո տալ նաև հանգստացուցիչ վարժություն՝ իրանը թեքել քիչ առաջ, ձեռքերը կախել և մի քանի անդամ աղատ ճռել թուլացրած մկաններով:

30. Վոտքերի գիրքը վոստյունով փոխելը, որինակ՝ յերե-

խաները վարժությունից առաջ կանգնած են կրունկները միացրած և պետք ե կատարեն վարժություն, վորի մաջ վոտքերը բացած են դեպի կողմերն ուսերի լայնությամբ՝ յերեխաները թւթե վոտքում են վոտքերի գիրքը վարժությունը վերջացնելուց հետո լնդունում են առաջվա գիրքը, կատարելով վոտքյուն:

31. Քայլք, վազք և վոտքյուններ տալ յերեխաների հասակին հատուկ արագությամբ, (վորն ավելի արագ և քան հասունացած մարդու արագությունը):

32. Նախքան վարժություն կատարելը՝ դաստիարակը պետք ե ասի կամ ցույց տա, թե ինչ վարժություն պետք ե կատարեն յերեխաները, վորպեսդի նրանք պատկերացնեն այն և կատարեն գիտակցորեն և տրամադրված կեռպով, ապա տալ մարմնի, վոտքերի, ձեռքերի յելման դրությունը և կատարել վարժությունը:

33. Բոլոր վարժությունների մեջ պետք ելինի թափ, թուլացրած մկաններով վարժությունն ուստակար չի լինի, բայց այն վարժություններից, վորոնք հատկապի տրվում են վորպես մկաններ թուլացնող վարժություն:

34. Վարժության ընթացքում դաստիարակը պետք ե նկարագրի շարժումը, բայց վոչ թե հաշվի, որինակ՝ յելման գրություն «Չեռքերը մեջքին», «Չեռքերը տարածել կողմեր» վարժության գեղգում, դաստիարակն ասում է «կողմ, մեջքին, կողմ, մեջքին», վորպեսդի հասկանալի լինի յերեխաներին:

35. Մարդանքի ժամանակ դաստիարակը պետք ե կանգնի յերեխաների գիմայ, յեթե վերջինները կանգնած են շարասյուններով և զեկավարվի յերեխաների կողմով, յերեխաների աջ կողմը դաստիարակի համար պետք ելինի ձախ կողմ, այսինքն վարժության ժամանակ ձախ ձեռքը շարժելու համար պետք ե շարժի իրեն աջ ձեռքը:

Յեթե յերեխաները կանգնած են շրջանաձև, դաստիարակը կանգնած և նրանց կողքին:

36. Առավոտվա վարժությունը պետք ե կատարել առանց իրերի:

37. Քայլքի և վազքի ոփթմի համար ովտագործել ծափ, թմբւեկ, դափ, ծնծղա (բացոթյա), խորանարդներ և այլ ծայնական գործիքներ, չաշվից խուսափել:

## ՅԵԼՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՄՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

38. Քայլքի ժամանակ զանազանակերպություն մտցնելու համար կարելի յի սալ նաև քայլերգ:

39. Շարասյուների առաջ կանգնած յերեխաները կոչվում են «ողակավարներ», վորոնց պետք եւ նշանակել մարզանքից առաջ:

40. Ողակավարները պետք եւ հաճախակի փոխվեն. Սկզբնական շրջանում ողակավարները նշանակվում են ակտիվ յերեխաներից հետագայում՝ նաև սասից յերեխաներից, այս դերը նրանց համար պատվավոր գեր եւ, նրանք սիրում են լինել ողակավար:

41. Ամեն մի վարժություն պետք եւ սկսել վորեա ճշգրիտ յելման դրությունից, որինակ՝

ա) մարմին կանգնած, նստած, պառկած և այլն.

բ) ձեռքերին կրծքին, մեջքին, ծոծրակին և այլն.

գ) վոտքերին նորբանները միասին, վոտքերը կողմ ուսերի լայնությամբ և այլն:

42. Վարժությունը սովորեցնելու համար դաստիարակն ինքը պետք եւ լավ զիտենա վարժությունը և կատարի ճիշտ ու աշխույժ, նա պետք եւ լինի որինակ յերեխայի համար:

43. Վարժությունը պետք եւ կատարել լավ տրամադրությամբ, սա կախված եւ դաստիարակից:

44. Ցանկալի յեւ վարժություններից հետո, մանավանդ յերբ յերեխանները կատարում են արթնանալուց (անմիջապես հետո, մարմինը շփել մաքուր և խոնավ լաթով, վորից հետո լավ չռացնել):

45. Դաստիարակը պետք եւ լավ յուրացնի բոլոր յելման դրությունները, վորպեսզի այս ձեռնարկն ոգտագործի հեշտությամբ:

46. Հատակին նստած և պառկած դրությամբ մարզանք կտարել այն գեղքում, յերբ կան համապատասխան պայմաններ (կանաչ խոտ, ասֆալտ):

47. Ցանկալի յեւ, վոր առավոտվա մարզանը կատարվի ամեն առավոտ, դա կախված եւ շենի, ի կամ բակի հարմարությունից և դաստիարակի պատրաստականությունից: Ծարահեղ գեղքում կարելի յեւ վորպես կողեկտիվը կազմակերպելու մի միջոց, տալ թեթև վաղք և քայլք:



Նկ. 1:




Նկ. 2:




Նկ. 3:

1. Կանգնած (Նկ. 1):
2. Նստած ծալապատիկ (Նկ. 2):
3. Նստած հատակին վոտքերն առաջ պարզած (Նկ. 3):
4. Պառկած մեջքին և յերեխանիվայր:


ՎՈՏՔԵՐԻ ՑԵԼՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ




նկ. 4:




նկ. 5:



նկ. 6:



նկ. 7:




նկ. 8:

1. Ներքանները միասին (նկ. 4)՝ ցատկումների համար;
2. Կրունկները միասին, թաթերը քիչ կողմ (նկ. 5):
3. Վոտքերն ուսերի լայնությամբ դեպի կողմերը տարած (նկ. 6):
4. Վոտքերը կողմերն ուսերի լայնությունից ավելի (նկ. 7):
5. Աջ վոտքն առաջ, ձախը յետ, կամ հակառակը (նկ. 8):

ԶԵՌՔԵՐԻ ՑԵԼՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ


1. Զեռքերը ցած՝ մարմնի ուղղությամբ (նկ. 9):
2. Զեռքերը գոտկատեղին (նկ. 10):
3. Զեռքերը մեջքին՝ մատներն իրար հազցրած (նկ. 11):
4. Զեռքերը մեջքին՝ դաստակը բռնած (նկ. 12):
5. Զեռքերը մեջքին՝ հակառակ արմունկները բռնած (նկ. 13):
6. Զեռքերն ուսերի բարձրությամբ դեպի կողմ տարածած (նկ. 14):
7. Զեռքերը տարածած կողմերը—յետ ուսերի բարձրությամբ (նկ. 15):
8. Զեռքերն իջեցրած ցած—յետ (նկ. 16):
9. Զեռքերը վեր բարձրացրած, ուսերի լայնությունից լայն (նկ. 17):
10. Զեռքերը պարզած առաջ, ուսերի բարձրությամբ (նկ. 18):
11. Զեռքերն արմնկում ձալած մարմնի մոտ, մատները բռնցքած կրծքի մոտ (նկ. 19):
12. Զեռքերն արմնկում ծալած, արմունկները կողմերը տարածած, մատները բռնցքած կրծքի մոտ (նկ. 20):




նկ. 9:




նկ. 10:




նկ. 11:



նկ. 12:



նկ. 13:




Նկ. 14:



Նկ. 15:




Նկ. 16:



1750  
1740


Նկ. 17:




Նկ. 18:




Նկ. 19:



Նկ. 20:



նկ. 21:



նկ. 22:

13. Ձեռքերն արմնկում ծալած, արմունկները դեպի կողմերը տարածած, մատներն իրար հազցրած կրծքի մոտ, ափերը դեպի ցած (նկ. 21):

14. Ձեռքերը ծոծրակին, մատներն իրար հազցրած, արմունկները յետ, կուրծքը լայնացրած (նկ. 22), 6—7 տարեկանների համար:

#### ԳԼՈՒԽ IV

### ԶԵՐՔԵՐԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. Յել. դր.—վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1, 2, 3, 4, 11 (4 տարեկանից սկսած):

1) Վ.—Ձեռքերը վեր բարձրացնել, դաստակներն ազատ շարժելով (հրաժեշտ տալ): Վարժությունը կատարել 3—4 անգամ: Վարժեցնում և ուսերի և դաստակների մկանները:


2) Վ.—Նույնը կատարել յուրաքանչյուր ձեռքով 2—3 անգամ:

II. 1) Յել. դր.—վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1 (4 տարեկանից սկսած):

Վ.—Ձեռքերը շարժել վեր, վար արմունկից չծալած թերով (կողքից) թռչունների թևերի պես, բացականչելով «պի» կամ «ծիվ»: Բացականչել ձեռքերն իջեցնելիս: Վարժությունը կատարել 3—7 անգամ: Վարժեցնում և ուսերի մկանները:

2) Յել. դր.—վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 6:

Վ.—Ձեռքերը շարժել դեպի ցած և վեր, բացականչելով «ծուղբուղուղու»: Վերջում ձայնը յերկարացնել: Վարժությունը կատարել 3—4 անգամ: Վարժեցնում և ուսերի մկանները և նորանում և արտաշնչմանը:



նկ. 23:

3) Յել. դր.—վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 6:

Վ.—Ձեռքերն իջեցնել և խիել աղղոքերին կողքից, բացականչելով «կլուղու» (աղուավ): Վարժությունը կատարել 5—6 անգամ:


III. 1) Յել. դր.—վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1, 2, 3, 4 (4 տարեկանից սկսած):

Վ.—Ծափ կրծքի առաջ արմնկից ծալելով ձեռները և բացականչելով «ծափ»: Վարժությունը կատարել 5—6 անգամ (նկ. 23):


2) Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերի՝ 1, 2, 3, 4, 6):

Վ.—«Բոնում են մոծակ, ձյուն, թիթեռ» և այլն: Զեռքերը վեր բարձրացնել և ծափ տալ (նկ. 24):

Վ.—Կատարել նույն վարժությունը, միայն թե ձեռները տարածելով աջ կողմ, ձախ կողմ, իջեցնելով ցած:



Նկ. 24:



Նկ. 25:

Վ.—Նույնը 6—7 տարեկանների համար, ավելացնելով ձեռքերի՝ 5, 11 և 14 յելման դրությունը: Վարժեցնում ե ուսագոտու և ձեռքերի մկանները:

3) Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերի՝ 1, 2, 3, 4, 6 (5 տարեկանից սկսած):

Վ.—Ծափ տալ առաջ արմունկը չծալած թերով: Վարժությունը կատարել 5—6 անգամ (նկ. 25):

Վ.—Նույն վարժությունը 6—7 տարեկանների համար, ավելացնելով ձեռքերի՝ 5, 11, 14 յելման դրությունը:

4) Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերի՝ 1, 2, 3, 4, 6 (5 տարեկանից սկսած):

Վ.—Յերեք անգամ ձեռքերը վեր բարձրացնել, իրար մոտեցնել, չորրորդ անգամ ծափ տալ բացականչելով «ծա-ա-ափ»: Վարժությունը կատարել 2—4 անգամ: Վարժեցնում ե ուսերի մկանները և նպաստում ե արտաշնչմանը:

Վ.—Նույն վարժությունը 6—7 տարեկանների համար, ավելացնելով ձեռքերի՝ 5, 11, 14 յելման դրությունը:

5) Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերի՝ 1, 2, 3, 4, 6 (6 տարեկանից սկսած):

Վ.—Կատարել չորս ծափ արմունկից չծալած թերով: Առաջին անգամ ծափ տալ գոտկատեղի բարձրությամբ, 2-րդ անգամ ուսերի բարձրությամբ, յերրորդ անգամ՝ ուսերից բարձր, իսկ չորրորդ անգամ՝ դլիս վեր: Վարժությունը կատարել 2—3 անգամ, բացականչելով «ծափ» կամ «1, 2, 3, ծափ» (նկ. 26):

Վ.—Նույն վարժությունը 6—7 տարեկանների համար, ավելացնելով ձեռքերի՝ 5, 11, 14 յելման դրությունը: Վարժեցնում ե ուսագոտու մկանները և նպաստում ե արտաշնչմանը:


6) Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերի՝ 8 (5 տարեկանից սկսած):

Վ.—Զեռքերը ճոճել առաջ և յետ և վերջին անգամ ծափ տալ, բացականչելով «1, 2, 3, ծափ»: Վարժությունը կատարել 2—3 անգամ: (Առաջ և հետ կատարել մեկ հաշվին): Վարժեցնում ե ուսագոտու մկանները և նպաստում ե արտաշնչմանը:

Վ.—Զեռքերը ճոճել առաջ և յետ և ծափ տալ առաջ և յետ (6—7 տարեկանների համար):

7) Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերի՝ 6, ափերը դեպի վեր (7 տարեկանների համար):

Վ.—«Ծափ առաջ չծալած թերով»: Զեռքերը մոտեցնելիս ափերը շուրջ տալ մեկ դեպի ցած, մեկ դեպի վեր, մոտեցնելիս



Նկ. 26:

ծափ տալ և բացականչել «ծափ»: Վարժությունը կատարել 3—4 անգամ: Վարժեցնում և զաստակների մկանները:

8) Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1, 2, 3, 4, 5, 6, 11, 14 (6—7 տարեկանների համար):

Վ. ա) — Ձեռքերը պարզել առաջ և կատարել մեկ յիտ մղող ծափ, բացականչելով «ծափ»: Վարժությունը կատարել 5—6 անգամ:

Վ. բ) — Ձեռքերը պարզել առաջ և կատարել 3—4 սահող ծափեր (ծնծղաներ), ապա ընդունել յելման դրությունը: Վարժությունը կատարել 2—3 անգամ: Ուսերի մկանների վարժություն:

9) Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1, 2, 6, 9, 11 (6—7 տարեկանների համար):

Վ. — Ձեռքերը տանել ցած—յիտ և կատարել մեկ ծափ: Վարժությունը կատարել 4—6 անգամ: Ուսագոտու մկանների վարժությունը:

IV. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 11:

1) Վ. — Ձեռքերը նետել ցած, բոռնցքը բաց անելով, կամ բռնցքած: Բոռնցքը բաց անելիս մատներն իրարից չհեռացնել: Վարժությունը կատարել 3—4 անգամ: Ուսերի և մատների մկանների վարժություն:

2) Վ. — Նույն վարժությունը կատարել դեպի առաջ (նկ. 27):

3) Վ. — Նույն վարժությունը կատարել դեպի կողմերը (նկ. 28):

4) Վ. — Նույն վարժությունը կատարել դեպի վեր (նկ. 29):

V. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1, 6, 9, 10:

Վ. — Ձեռքերն արթնկում ծալել, մատները բռնցքել և մոտեցնել ուսերին (կողքից), բացականչելով «ինչ ուժեղ ենք»: Վարժությունը կատարել 3—4 անգամ: Թերերի և մատների մկանների վարժություն (նկ. 30):

Վ. — Նույն վարժությունը 6—7 տարեկանների համար, ավելացնելով ձեռքերի՝ 2, 3, 4, 5, 7, 8 և 14 յելման դրությունը:


VI. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 8:

Վ. — «Ժամացույց»: Ձեռքերը ճոճել առաջ, յիտ, բացականչելով «տիկ, տակ»: (Առաջ՝ տիկ, յիտ՝ տակ): Վարժությունը կատարել 5—8 անգամ (նկ. 31):


VII. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 6 (5 տարեկանից սկսած):




նկ. 27.




նկ. 28.



նկ. 29.



նկ. 30.



նկ. 31.

Վ.—«Մկրատ»: Ձեռքերը բերել առաջ, խաչաձև, արմնկում չծալած թկերով և բացականչել «ժ-ժ»: Վարժությունը կատարել 4—5 անգամ: Ուսագոտու մկանների և արտաշնչման վարժություն (նկ. 32):

VIII. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 6 (5 տարեկանից ու կոսած):



Նկ. 32:

Վ.—«Տաքանալ» կամ «Մամային այտես ենք սիրում»: Ափերով բռնել հակառակ ուղերը, բացականչելով «ուխ»: Վարժությունը կատարել 3—4 անգամ: Ուսագոտու մկանների և արտաշնչման վարժություն (նկ. 33):

Վ.—Նույն վարժությունը 6—7 տարեկանների համար, ողտազործելով ձեռքերի՝ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10 և 14 յելման դրությունը:

IX. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1, 3, 4, 6:

Վ.—Ձեռքերը բերել առաջ և բռնել հակառակ արմունկները, բացականչելով «պո-ս-ս»: Ուսագոտու մկանների և արտաշնչման վարժություն: Վարժությունը կատարել 3—4 անգամ (նկ. 34):


Վ.—Նույն վարժությունն ոգտագործել 6—7 տարեկանների համար ավելացնելով ձեռքերի՝ 2, 5, 7, 8, 9, 10 և 14 յելման դրությունը:

X. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1 (5 տարեկանից ու կոսած):


1) Վ.—Մեկ ձեռքը կողմ տարածել և նայել մատների ծայրին: Յուրաքանչյուր ձեռքով վարժությունը կատարել 2—4 անգամ: Ուսերի և պարանոցի մկանների վարժություն (նկ. 35):

2) Վ.—Նույն վարժությունը կատարել յերկու ձեռքով 3—4 անգամ (նկ. 36):


3) Վ.—Նույն վարժությունը 6—7 տարեկանների համար, ավելացնելով ձեռքերի՝ 2, 3, 4, 5, 9, 10, 11 և 14 յելման դրությունը:



Նկ. 33:



Նկ. 34:



Նկ. 35:



Նկ. 36:

Յեթե վարժությունը կատարվում է Յ-րդ յելման դրությունից, ապա նայել վեր, հետո կողմ: Յուրաքանչյուր կողմ վարժությունը կատարել 2—3 անգամ: Յեթե ձեռքերը բարձր դրությամբ են, այդ դեպքում վարժությունը մեկ կողմ կատարելուց հետո ձեռքերն իջնեցնել ցած, քիչ սպասել, ապա կատարել մյուս կողմը:

XI. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1, 2, 3 (4 տարեկանից սկսած):

Վ.—«Ինչ մեծ ենք»: Ձեռքերը բարձրացնել վեր, նայել մատների ծայրեն և բացականչել «Ինչ մեծ ենք»: Մեջքի մկանների և արտաշնչման վարժություն: Վարժությունը կատարել 3—4 անգամ (նկ. 37):

Վ.—Նույն վարժությունը 6—7 տարեկանների համար, ավելացնելով ձեռքերի՝ 5, 11, և 14 յելման դրությունը:

XII. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1 (4 տարեկանից սկսած):

Վ.—Ձեռքերը տարածել դեպի կողմերը, բացականչելով «Ինչ լայն ե»: Ուսագոտու և մեջքի մկանների վարժություն: Վարժությունը կատարել 3—4 անգամ:

XIII. 1) Յել. դր.—Վոտքերի՝ 3, աջ ձեռքը վեր բարձրացրած, ձախը՝ ցած իջեցրած (5 տարեկանից սկսած):

Վ.—Ձեռքերի դիրքը փոխել: հանդիպելիս կատարել մեկ սահող ծափ (ծնծղա), բացականչելով «ծափ»: Վարժությունը կատարել 3—4 անգամ, Ուսագոտու մկանների վարժություն:

2) Յել. դր.—Աջ ձեռքն առաջ պարզած, ձախը՝ ցած—յետ, կամ հակառակը (6—7 տարեկանների համար):

Վ.—Բնական քայլքի արագությամբ ձեռքերի դիրքը փոխել, վարժությունը կատարել 3—5 անգամ:

XIV. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝


1) Աջ ձեռքը կողմ տարածած, ձախը՝ ցած իջեցրած (նկ. 38):

2) Աջ ձեռքը վեր բարձրացրած, ձախը՝ ցած իջեցրած (նկ. 39):


3) Զախ ձեռքը պարզած առաջ, մատները բռնցքած, աջը՝ բռնցքած, կրծքի մոտ (նկ. 40):

4) Աջ ձեռքը կողմ տարածած, ձախը՝ աջ ուսի վրա (նկ. 41):

Վ.—Ձեռքերի դիրքը փոխել: Վարժությունը կատարել 4—6



Նկ. 37.




Նկ. 38.




Նկ. 39.



Նկ. 40.





Նկ. 41.



Նկ. 42:



Նկ. 43 ա:



43 պ

անգամ, ովագործել նաև պարանոցի վարժությունը (6—7 տարեկանների համար): Ուսագոտու մկանների վարժություն:

XV. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 12:

Վ.—Ձեռքերը թափով իջեցնել ցած, բացականչել «ս—ս» և արագ ընդունել յելման դրությունը: Վարժությունը կատարել 4—5 անգամ: Ձեռքերի և վորովայնի պրեսսի մկանների վարժություն (նկ. 42):

XVI. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 13:

1) Վ.—Ձեռքերը հանգիստ տանել կողմեր—յետ և թափով մոտեցնել կրծքին: Վարժությունը կատարել 3—4 անգամ: Ուսագոտու մկանների վարժություն:

2) Վ.—Նույն վարժությունը՝ թափով տանել կողմեր—յետ և հանգիստ մոտեցնել կրծքին:

XVII. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1, 2, 3, 4:

1) Վ.—Ձեռքերը տարածել կողմերը: Վարժությունը կատարել 3—4 անգամ:

Ուսերի մկանների վարժություն:

2) Վ.—Ձեռքերը պարզել առաջ: Վարժությունը կատարել 3—4 անգամ:

3) Վ.—Ձեռքերը բարձրացնել վեր: Վարժությունը կատարել 3—4 անգամ:

4) Վ.—Նույն վարժությունը 6—7 տարեկանների համար, ավելացնելով 8 և 14 յելման դրությունը:

XVIII. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1 (վարժված խըմբերի համար տարեկերջում):

Վ.—«Ձզվել»: Ձեռքերը տանել կողմեր—յետ, ափերը շուռ տալով դեպի վեր, հետո ձեռքերն արթնկում ծալել, մատները բռնցքել և արմունկները յետ տանել: Վարժությունը կատարել 3—4 անգամ:


Ուսագոտու և մեջքի մկանների վարժություն (նկ. 43 ա, բ, դ):

XIX. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 14 (6—7 տարեկանների համար):

Վ.—Արմունկները բերել առաջ գլուխն իջեցնելով, և բացականչել «ուֆ—ֆ»: Վարժությունը կատարել 3—4 անգամ: Ուսագոտու մկանների և արտաշնչման վարժություն:

XX. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1, 2, 3, 4, 5, 10, 11, և 14 (6—7 տարեկանների համար):

Վ.—Զեռքերն արագ տանել կողմերը—յիտ, ափերը շուռ տալով դեպի վեր, միաժամանակ գրուխը յիտ տանել և ապա դանդաղ ընդունել յիլման. դրությունը: Վարժությունը կատարել 3—4 անգամ: Մեջքի, սլարանցի և դատակների մկանների վարժություն (*նկ. 44*):




*նկ. 44:*

XXI. Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 6:

Վ.—Ափերը շուռ տալ դեպի վեր: Վարժությունը կատարել 3—5 անգամ: Դատակների մկանների վարժություն:

XXII. 1) Յել. դր.—Աջ ձեռքը կողմ տարածել, ձախը պահել իջեցրած:

Վ.—Աջ ձեռքով կատարել կողքի պտույտներ: Նույնը կատարել և ձախ ձեռքով:



*նկ. 45:*

2) Վ.—Կողքի պտույտները կատարել յերկու ձեռքով միաժամանակ՝ յիտ, ցած, առաջ և վեր: Պտույտները կատարել չծալած թեքերով: Վարժությունը կատարել 3—4 անգամ: Ուսազոտու մկանների վարժություն (*նկ. 45*):

Վ.—Նույնը կատարել հակառակ ուղղությամբ:


3) Յել. դր.—Վոտքերի՝ 3, ձեռքերի՝ 1:

Վ.—Առջևում աջ ձեռքով կատարել պտույտներ՝ առաջ, ձախ, վեր և աջ: Կա-


տարել և հակառակ ուղղությամբ: Այս ամբողջը կատարել և ձախ ձեռքով:

Վ.—Առջևում պտույտները կատարել յերկու ձեռքով միաժամանակ՝ առաջ—խաչաձեկ, վեր, կողմ և ցած: Պտույտներ կատարել չծալած թեքերով և բացականչել «շ—շ»: Սկզբում ձեռները պտտեցնել մեկական անգամ ընդմիջումներով, հետո կատարել անընդհատ 3—4 անգամ: Ուսազոտու մկանների և արտաշնչման վարժություն:

Վ.—Նույնը կատարել հակառակ ուղղությամբ:



*նկ. 46:*



*նկ. 47:*

4) Յել. դր.—Զեռքերի՝ 11:

Վ.—«Շոգեցարժի անի մներ»: Պտույտներ կատարել վեր, առաջ, ցած և յիտ, արմունկներն ազատ շարժելով և բացականչելով «չո»: Վարժությունը կատարել 2—3 անգամ: Ուսազոտու, թեելի մկանների և արտաշնչման վարժություն (*նկ. 47\**):

\*) Մանրություն,—Առաջին անգամ (բացի շոգեցարժի անի մներից) փոքր և արագ պտույտներ կատարել հետզհետե պտույտները մեծացնել, իսկ տեմպը դանդաղեցնել:

«Շոգեցարժի անի մները» կատարել հետեւյալ ձեռվ՝ առաջին պտույտը կա-

5) Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերի՝ 12 (6—7 տարեկան-ների համար):

Վ.—Արմունկները պտտեցնել՝ յետ, ցած, առաջ և վեր: Ուսագոտու մկանների վարժությունն Վարժությունը կատարել 4—8 անգամ (նկ. 48):

XXIII. Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերի՝ 6, մատները բը-ռընցքում (6—7 տարեկանների համար):

Վ.—Դաստակները պտտեցնել ցածից դեպի վեր և հակառակ ուղղությամբ: Դաստակների մկանների վարժություն:

XXIV. Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերի՝ 1, 2, 3, 4, 5, 11 և 14 (6—7 տարեկանների համար):

1) Վ.—Ձեռքերը տանել առաջ, վեր, կողմեր և ընդունել յելման զրությունն Վարժությունը կատարել 3—4 անգամ: Ուսագոտու մկանների վարժություն:

2) Վ.—Նույն վարժությունը կատարել առաջ ծափ տալով:

3) Վ.—Նույն վարժությունը կատարել վեր ծափ տալով:

XXV. Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերը՝ առաջ—վեր մատները բոնցքած (6—7 տարեկանների համար):

Վ.—«Պարանը քաշել»: Վերեխց դեպի ցած յերկու ձեռքով միաժամանակ, իրանը քիչ առաջ թեքելով: Վարժությունը կատարել 4—5 անգամ: Ուսագոտու և մեջքի մկանների վարժություն (նկ. 49):

XXVI. Յել. դր.—Վոտքերի՝ Յ, աջ ձեռքը վեր բարձրաց-րած, մատներն աղատ, ձախը կրծքի առաջ, մատները բոնցքած, (6—7 տարեկանների համար):


Վ.—«Պարանը քաշել»: Ձեռքերի դիրքը փոխել: Վարժությունը կատարել 5—7 անգամ: Ուսագոտու, թևերի և մատների մկանների վարժություն:

XXVII. Յել. դր.—Վոտքերի՝ Յ, աջ ձեռքը կողմ—վեր բարձ-րացքած, իսկ ձախը՝ կողմ—ցած (6—7 տարեկանների համար):


Վ.—«Ջրաղաց»: Ձեռքերի դիրքը փոխել: Վարժությունը կատարել 5—6 անգամ: Ուսագոտու մկանների վարժություն:

XXVIII. Յել. դր.—Վոտքերի՝ Յ, ձեռքերի՝ 12 (6, 7 տարե-կանների համար):


աարել մեծ և դանդաղ, գնալով աստիճանաբար փոքրացնել և արագացնել, վեր-ջում պտույտները մեծացնելով և դանդաղեցնելով: Ձեռքերն իջեցնելիս (անիվ-ները կանգնեցրին) բացականչել «ս—ս—ս»:



Նկ. 48:



Նկ. 49:



Նկ. 50:

